

(Armeniisi Romanii, 1914, էջ 73), ունեցան չբեղ տուներու տէր մեծահարուստներ, ինչպէս Վասիլէ Միսիր, հայոց մէջ ամենէն երեւելին, եւ Ռաքաթուլ, որոնցմէ առաջինը 1791-ին աւստրիացիներուն կենդանիներ հայթայթեց եւ զանոնք հիւրընկալեց իր տուներուն մէջ, ինչպէս կը վկայէ Ռոմանի մետրապոլիտ Մելքիսեդեկը (Chronica Rumanului, հատոր Բ., էջ 19, 41, 44, 99): 1760-ին, 1799ին, 1803-ին, 1814-ին եւ 1827-ին Ռոմանի հայերը ստացան Մոլտավիոյ իշխաններէն իրենց մասնաւոր մենաշնորհը, իրբեւ ազգային արհեստակցութիւն (breasla), ինչ որ կը լուսաբանէ իրենց անտեսական ամբողջ դերը այս քաղաքին մէջ:

Այսպէս, անոնք 2200 լէյ տարեկան միանըւազ տուրք մը կուտային, եւ իւրաքանչիւր լէյին համար 15 փարա իբր ուսուրա (յաւելուածական տուրք՝ որ կը գանձուէր պօժանքուծախքերուն համար). իբր ձմրան նպաստ կը գանձուէր 15 լէյ բամպակեղէնի խանութներէն, 10 լէյ պրաշովեան ապրանքներու վաճառուատուններէն, 10 լէյ կօշկակարանոցներէն, 8 լէյ նպարավաճառատուններէն, օղեգործարաններէն եւ մոմաշինարաններէն, իսկ սրճարանները կը վճարէին Քաֆէճի-Պաշիին հարածը (տուրք՝ Բ. Դրան յատկանալի): Գինետունները կը վճարէին 3 լէյ 100-2000 լիթրնոց տակառին, եւ 60 փարա 70-100 տէքալիթրնոց ամանին համար: Իրենց պարկակիրները (desagari) պիտի կարենային չըջել զիւղերն ու տօնավաճառները: Հայերը պիտի կարենային իրենց արօտավայրերու մէջ ուս հովիւներ պահել: Իրենցմէ չպիտի պահանջուէր մէնզիլի ձի, պարէն եւ տարապարհակ: Տօնավաճառի ծախքերուն համար իրենցմէ պիտի գանձուէր տուն զլուխ 60 պան (սանթիմ): Իրենց տան մէջ աշխատող մուճակագործները ոչինչ չպիտի վճարէին:

* * *

Հայ տարրը եւ անոր հետ հայ առեւտրական կեանքը Եաշի մէջ սկսած է բարգաւաճիլ մանաւանդ այն ատեն, երբ Մոլտավայի իշխանութեան աթոռը բարձրացաւ Շթէֆան Չէլ Մարէն (1457-1504), որ իր մայրաքաղաքը ծաղկեցնելու համար մասնաւոր հրովարտակ

մը ուղղեց հայերուն հրաւիրելով զանոնք գալ եւ շէնցնել Մոլտավան, եւ խոստանալով անոնց իր հովանաւորութիւնը եւ առեւտրական շատ մը արտօնութիւններ: Ու Եաշը հետզհետէ դարձաւ տեսակ մը կեդրոնական շուկայ Մոլտավայի հայ եղնավաճառներուն համար, որոնք կը հաւաքէին հոն երկրին արջառը եւ հոնկէ կ'արտածէին Եւրոպա: Հայերն էին դարձեալ գլխաւոր այցելուները Եաշի տարեկան երեք մեծ տօնավաճառներուն:

Եաշի մէջ ալ միեւնոյնն էր հայոց տրուած մենաշնորհները: 1750-ին հայերը թաղ մը ունէին հոն իրենց անունով, — Հայութիւն (Armenimea): Հոնկէ կը մեկնէին այն վաճառականները, որոնք Թրանսիլվանիոյ հետ առեւտուր կ'ընէին, կ'ըսէ Եօսկա (Studii Si Documente, V, էջ 329, թիւ 836):

* * *

Պաքովի, Նէմցի եւ Թըրկու-Փրոմօզի մէջ ալ, կ'ըսէ Փրոֆ. Եօսկա, կը կիրարկուէր մեւնոյն ուէթիմը (Armenii Si Romenni, 1914, էջ 74), ինչպէս Մոլտավայի ուրիշ քաղաքներուն մէջ:

Մոլտավայի հայոց առեւտրական այս իրաւունքները հաստատուած են իշխանական բազմաթիւ հրովարտակներով, որոնց մասին խօսեցանք մեր սոյն ուսումնասիրութեան երկրորդ զլուխին մէջ:

ՎԱԼԱՔԻՈՅ ՄԷՋ

Վալաքիոյ (Մունթէնիա) չըջանին մէջ աւելի նոր է հայոց դերը: Նախ որ հայերը իրենք նոր են այդ չըջաններուն մէջ, ուր հաստատուած են Մոլտավայի հայ գաղութին կազմութենէն դարեր ետք միայն: Մինչդեռ Մոլտավայի հայը Անիէն ու Խրիմէն կուգար, Պուրկարիայէն եւ Թուրքիոյ զանազան կողմերէն եկող հայերն է որ կազմեցին Վալաքիոյ հայ գաղութը:

Հետեւաբար Վալաքիոյ հայոց դերը իրբեւ առեւտրական տարր աւելի երկրորդական դժի վրայ կը մնայ՝ բաղդատմամբ Մոլտավայի եւ Պուքովինայի հայոց խաղացած դերին: Մանաւանդ որ Վալաքիոյ հայ գաղութին կազմուած ատեն՝ արդէն սկսած էր տիրապետութիւնը Ֆէնէրցի յոյն իշխաններուն, որոնց հովանիին